



35. ՓԱՐՈՒ ԱԽՉԻԿ

Կեղի մեկ խեր ու մեր ու մեկ տըղե՞ն:

Գյիշեր տըղեն կը քյընի: Երազ կը տեսնա, օր մեկ շատ խորոտ ախչիկըն կը գա ւնու երազ, մատնըկներ կը փոխեն երազի մեչ:

Խըլիսուն կէլի, օր ո՛չ ախչիկ, ո՛չ պան, մատնիկ գի մատ:

Տըղեն էլ կասա. - Եսի երա՞զ էր, թե՞ օղորթ:

Տըղեն օր օրից մառախից շատ կը զայիֆնա:

Խեր կը խառցընա. - Քյե ի՞նչ ա էլեր, ընչի՞ մառախս կէնես:

Տըղեն խոր չասեր, թե ինչ ա: Տըղեն էլ մեկ օր կէլնի, կը տա ճամբախ: Չատ կէրբա, քիչ կէրբա, շատ ու քիչ Աստված գյիտա, մեկ խալիվորըն կը գա ւնու հառեծ: Խառցընա տըղին, թե՝ դի՞ր կէրբա:

Տըղեն էլ կասա. - Եսպես երազըն տեսա՝ մեկ գեղեցիկ ախչիկ մ'էկավ ծի երազ, մատնիկներ փոխեցինք, խըլիսուն էլա՝ ախչիկ չըկա:

Խալիվորն էլ կասա. - Գյընա՛, իմ տուն գի վեր ճամխին, իմ ախչըկեն ասա՝ մատնիկըն կա, թը տա քյե: Են մատնիկն էլ օր տիւ զըվըոցուցես, իրեք արաք կը գան քիւ հառեծ, ետա արաքներուց ի՞նչ ուզես, քյե կը պերեն:

Տըղեն էլ գյընաց, տեսավ օր տուն գի վըր ճամխին, ետա տան էլ տիւռ չըկա, որ մեկ տեղեն կան կը գա, տիւռ չըրևա:

Տըղեն էլ կը նստի պատի հառեծ, կը լա, մառախս կէնա, թե՝ ինչպե՞ս էնեմ:

Ախչիկն էլ լալիւ ծեն կառի տան մեչ:

. Ախչիկ փանջարըն վեր կելի, կիրիշկա, կասա. - Տըղա՛, ընչի՞
կը լաս:

Կասա. - Քհւ խեր կասեր՝ գյընա՛, իմ ախչիկ մատնիկըն թը
տա քյե:

- Լա՛վ, տիւ իմ խեր կը ճանչընա՞ս, իմ խեր ո՞րն ա:

Կասա. - Քհւ խեր մեկ ծերմակ, սիվտակ մուրուս խալիվոր մ'
ա:

Ախչիկն էլ ըզմատնիկ եթալ փանջարից, տըղեն առավ:

Ասաց. - Եփ օր թիւ գործեր տեսնիս, ա՛ռ իմ մատնիկ, արե՛:

Տըղեն էլ առավ ըզմատնիկ, գյընաց: Քիչ տընեն հեռցավ,
խալիվոր ասած ընգանվ միտ:

Ասաց. - Խենքյ էսա մատնիկ տը զըվըռցուցիմ, իրեք արաբ
կը գա՞՞ն:

Տըղեն ըզմատնիկ զըվըռացուց, իրեք արաբ էլան հառեճ:

Տըղին ասին. - Ի՞նչ կուրես:

Ասաց. - Ես կուրեմ՝ էսա մատնըկի տեր պերեք ծի:

Են մեկ արաբ ասաց. - Էտա մատնըկի տեր փարիքյներու
թագավորու ախչիկն ա, գի մըշ յոթ ծովու կըծիին: Մենք մեկ թոզ,
տուման ու ծուխս կէնենքյ, օր փարիքյ մե ջըտեսնան, էնա արաբն
էլ թը քյե շալկա, առինքյ, յանքյ ախչըկե մոտ, տիւ ա՛ռ զախչիկ,
արի՛:

Ենրնքյ էլ մեկ թոզ, տուման, ծուխս էրին, ըզտըղեն շալկեցին,
տարան ախչէկե մոտ, զախչիկ առավ, էկավ: Ախչիկն էլ փա-
րիքյներու ուրիշ թագավորի լաճու խետ նշանուկ ա:

Տըղեն առավ զախչիկ, էկավ: Էկավ էն խալիվոր մարթու
տուն, մատնիկ տըվին ախչկան, արաբներն էլ աչիչ հառցըվեն
կուրիսան, տըղեն էլ առավ զախչիկ, էպեր, փըսակեց վերեն,
նստավ ուր տուն: Յոթ օր, յոթ գյիշեր խարսնիս էրին, խաղտուն
էրին, քյեֆ էրին:

Մենքյ տառնանքյ վըր փարիքյներու թագավորի լաճուն, օր
նշանվեր էր ախչըկե խետ:

Էտա թագավորի լաճն օր կը իհմանա, թե ուր նշանած
կուրսըվեր, ջիւյաբ կուտա ախչըկե խոր, թե՝ իմ նշանած վի՞ր
տվիր, ի՞նչըլս էրիր՝ չէրևար:

Խերն էր, չըգյիտեր՝ ի՞նչըլս ա էղեր:

Կասա. - Ինքյ թողեր ա, գացեր, չըմ գյիտեր՝ ի՞նչըլս ա էղեր:

Տըղի խերն էլավ, պատրաստութեն տեսավ, օր երթա վըր ախսըլկա խոր կոիկ:

Եպեր, ետոր ասքյըրի մեջ կովողներ ջոկեց, օր կանա ծանտըր գորգեր վիրուցա, աղեկ կոիկ էնա: Չորս-խինգ կտրիծ մարք առավ, էկավ:

Քառսուն կըդրանց գորգըմ շինեց մեկին, մեկելին եռեսունական կըդրանց, մեկին էլ վարսուն կըդրանց:

Զիւյաբ տվին փառու խոր, թզ կը գանք կոիկ: Էն էլ ուր փայլւաներ ճոկեց, էն էլ քառսուն-հիսուն կըդրանց գորգ էտու շինել:

Գացին կովի տաշտ:

Էն գախ, օր կը զանեն հիրարու, գորգերու օղեր կը տիպի հիրար, կրակ մոտեն կը թալա:

Ծըկներ ծովուց գյըլսներ վիրուցին, թամաշա էրին, խավքեր էրկնուց ժիշվան, թամաշա էրին, գյետին պատռավ, հիւտեր, խիւտրիւնքյներ էլան թամաշա էնելու:

Մեկ տարի հիրարու գարկին:

Էտա տըղի խեր զախըլկե խեր հաղթեց:

Ասավ. - Ի՞նչ կուզես, թիւ խարս ես չըմ գյիտի՝ դիր ագներ:

Տառցավ տուն: Տըղի խետ ճարըմ չեղավ: Տըղեն առավ մեկ փայլւանըմ, գյընաց աշխար ֆըռալ:

Շատ գյընաց, թիւ գյընաց, շատ ու թիւ Աստված գյիտա: Գյընաց, մեկ գյետի՛մ ռաստ էկավ:

Տեսավ, օր մեկ տըլի միջուց պա մ'էլավ գհմշիւ տեսակ՝ իրեց կոտըշեն: Դըմեն կոտըշեն զանգակըմ կախուկ մոտեն:

Կըդանչեց վըր թագավորու տըղին, ասաց. - Դի՛ր կերթաս, վըր ձի դի՛ր կընցիս, կը յաս:

Ասաց. - Մենք կը յանք խըտ մեր ճամխին, թիւ ի՞նչ գործն ա:

Ասաց. - Եկեքյ, ձի գիւլաշըմ տվեքյ: Թը ծե տըրի գյետին, ծե կը մորթիմ, թզ տիւ ձի տըվիքյ, ի՞նչ կուզեքյ, էրեքյ:

Թագավորի փայլւան կը խասի, էտ ջանավարին կը պըռնա, կը տընա գյետին:

Թագավորի տըղեն կասա. - Թուր պե՛, վիզ կտրենք:

Են ջանավար եսաց. - Զի մը՝ մոռթեք, ծի տարեքյ խընտ ծե,
ի՞նչ նեղութեն եղի, իմ վերեն:

Կելնեն, կառեն ուրենց խետ, կերթան:

Կասին. - Քիւ անուն ի՞նչ ա:

Կասա. - Իմ անուն Զանգահոռ ա:

Կերթան, մեկ քաղցի'ն ռաստ կը գան:

Ետա քաղցին էլ բարան ա չորս պիլիք, չըն կանա մտին
ներս: Կանան բարանի հառեն:

Մեկ մարթըմ կանչեց, ասաց. - Ի՞նչ մարթ եքյ, ընչի՞ եքյ կա-
ներ ետա տեղ, ե՛տ տանցեքյ:

Փայլւան ասաց. - Յա՞ն արի, եսա տիւռ պա՛ց, յա՞ն եսա բա-
րան կը քակենքյ, կը գանքյ ներս:

Ասաց. - Ետա տեղ գորզըմ կա, թե վիրուցիքյ, թալեցիքյ
բաղմով ներս, տիւռ պանամ, գաքյ ներս, թե չովիրուցիքյ, գամ,
ծեր վըզեր ճընճըղկու պես քաշեմ:

Ետ թագավորի փայլւան ասաց էտ տըլու միջու ջանավըրին.

- Զանգահո՛ն, տիւ ասիր՝ ի՞նչ նեղութեն կա՝ իմ վերեն, դե եսա
գորզ վիրու, թա՛լ ներս:

Զանգահոռն էլ կոտոշ կը տա, ետա գորզ կը վերուցա, կը
թալա բարան վեր, քաղցի մեշ:

Մարթն էլ մեկ տիւռըմ կը պանա, կերթան ներս: Կերթան, օր
կը տեսին ըն բաղընի միջու մարթ, մարթ մ'ասե, մեկ ուղտ մ'ասա:
Տեսնեն օր մեկ ճաղցե քարըմ կախե քամկեն, գի հըմեն գախ էնոր
շալակ:

Խառցընա. - Տիւ ի՞նչ մարթ եքյ:

Կասեն. - Փարիցներու թագավորու լաճն ա, ես էլ էնու փայ-
լւան եմ:

Էնոնքյ կասեն. - Քիւ անուն ի՞նչ ա:

Կասա. - Իմ անուն Բարգըրան ա:

Կասա. - Ղի՞ր կերթաքյ:

Կասեն. - Կերթանքյ խընտ մեր տարտին:

- Զի՞ էլ տարեքյ խընտ ծե:

Կելնին, խընտրաց կերթան:

Կերթան, կը տեսնան, օր ինգան մեկ սըվտակ էրկիր՝ խող ու
թար սըվտակ, ճիւր սըվտակ, սարեր սըվտակ:

Շատ գացին, թիւ գացին, տեսան մեկ տաշտի՞մ մեչ շենըն
մ'երևաց: Են շենըն էլ սըվտակ էր:

Գացին, նստան շենըն տիւու, տեսան օր մեկ ախչիկըն
փանջարեն վեր գյուղիսն էխան տիւս, ուր ջրլերն էլ սըվտակ:

Ախչիկ ասաց. - Էլե՞ք, գացե՞ք, քանի Սըվտակ դև չէկեր ա,
ծե ուտա:

Ասին. - Չէ՛, մենք չընքյ էրթա, տիւ արե՛, տիւու պա՛ց, մենք
գանքյ ներս, թզ գա, մե ուտա:

Ախչիկ տիւու եպաց, տեսավ չորս մարթ գի էտա տեղ: Տեսավ,
օր մարթըն ճաղցի քար կախս քամկեն:

Ասաց. - Եսի ի՞նչ ա՝ կախեր ես քիւ քամկեն:

Ասավ. - Քիւ ի՞նչ գործն ա:

- Ապա քիւ անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անուն Բարգըրան ա:

Ասաց. - Ապա ենոր անուն ի՞նչ ա, ինչ իրեքյ կոտըշեն զան-
գըկներ կախեր մոտեն:

Ասաց. - Ենու անուն Զանգահոռ ա:

Ասաց. - Էկե՞ք, էկե՞ք էրթանքյ տուն, խաց կերե՞ք ու գա-
ցե՞ք:

Գացին, իտոր խացն էլ սըվտակ, իտոր կըտելներն էլ սըվ-
տակ:

Խաց կերան:

Խառցընեցին. - Սըվտակ դև դի՞ր ա գացեր:

Ասաց. - Գացեր վզր Սև դևուն կոհիվ:

- Ընչի՞ վերեն կը կովին:

Ասավ. - Վզր մեկ քառքի՞մ կը կովին:

- Կովուց չըտառնա՞ր, գա տուն:

- Գյիշեր կը գա տուն, ցերեկ կերթա:

- Օր մենքյ մընանքյ ըստա, մե էլ չըտառնե՞ր ինտ ուր, ենոր
օգնենքյ:

Ախչիկ ասաց. - Տիւ էկեք, գացեքյ ենա բաղչի մեչ նստեքյ,
դև օր կը գա, ես կասեմ: Թե հընտիւնեց, ես ծե կը կանչեմ, թե չըն-
տիւնեց, չըխս ծեր խոտ կառնի, կը գա խըտ ծե, կը կովեքյ:

Ենոնքյն էլ էլան, գացին բաղչեն, նստան:

Դիրիկուն դև էկավ, ասաց. - Կնիկ, փարու խոտ կը գա, վո՞ն
ա էկեր ըստա:

Ասավ, թե. - Չորս մարթ էկան, տղ գյեն քյե օգյնության,
չըգըխըցան գյեն, գյիտին, թե տիւ չըր հընտիւնե:

Դևն էլ ասաց. - Ենոնքյ չէկած ծի օգյնելու, էկած քյե հապով,
տիւ սութ կասես:

Էլավ, կընգան շատ չարչըրեց դև:

Էլավ, էտու խընչ խոտին, ինգան խետի խետ գյընաց:

Գյընաց, տեսավ չորս մարթ նստած են:

Ասավ. - Տիւ ընչի՞ եք էկեր ըստա:

Ասին. - Մենքյ խասկըցեր ենքյ՝ տիւ Սև դևու խետ կոիվ
կենես, էկեր ենքյ քյե օգյնություն:

Ասավ. - Շատ լավ, օր էմալ ա, էկեր երթանքյ տուն, չում
առավոտ կերթանքյ:

Յէլան, գացին տուն, խաց կերան, պառկան քյընան չում
խըլիսուն:

Խառցընեց, ասաց. - Ծեր անուներ ի՞նչ ա, ծի ասեքյ:

Ըն մեկ ասաց. - Իմ անուն Զանգանիոն ա:

Ըն մեկն էլ ասաց՝ իմ անուն Բարգըրան ա: Ըն մեկն էլ
ասաց՝ ես փարիքյներու թագավորի փայլւան եմ, ըն մեկն ասաց՝
ես փարիքյներու թագավորի լաճն եմ:

Դևն էլ տեսավ, օր էտոնքյ կտրիծ մարթ են, էլան, խըլիսուն
խընդրաց գացին:

*Գացին կըռպու տաշտ, տեսան, օր Սև դև էկավ: Ընտեղ Սև
դև իշկաց, օր Սըվտակ դև չորս ընգեր էլ ա պերեր:

Սև դև ասաց. - Էտա մարթեր տիւ հո՞ւր ես պերեր, ես
մենակ եմ, տիւ էլ մենակ թը գյեր:

Ասաց. - Ենոնքյ էկան ծի օգյնություն:

Դև ասաց. - Ես չըմ հընտիւներ հըմեն, օր մեկտեղ գաք, մեկ-
մեկ էկերյ, կովենքյ:

Սըվտակ դև տառցավ վըր ուր ընգերներուն, ասաց. - Ծե հը-
նարըմ կա”, մեկ-մեկ խետ կովերյ:

Ընգերներ ասին. - Խա՛, տիւ քիւ տեղ հանգիստ նստիս:

Թագավորի լաճ ասաց. - Բարգըրան, պա՛մ կանա՞քյ ենեքյ
խետ, թե իմ փայլւան խանեմ:

Բարգըրան ասաց. - Խա՛, էսի իմ վերեն:

Էլան, էն ու Սև դև բաշլեցին կոիվ:

Բարգրան ուր քար քամկեն առեց տակ, պըսնեց ուր ծեռ,
երաց ճարտալ, գյշնաց թըս Սև դև:

Սև դևն էլ քանի գորզ զանի, Բարգրան ուր քար կը տա
հանեմ, Բարգրան էլ ուր քառսուն կըդրանոց գորզ կը զանի
դևուն, դևուն պա՛ն չեղիր:

Չում կեսօր կռվան, ոչ էն էնոր հաղթեց, ոչ էն էնոր:

Կեսօրին շըմուեցին, նստան խաց ուտելու:

Կեսօրին Սըլտակ դև ասաց Բարգրանին:

Ասաց. - Տիւ կը զանես Վըր էնու ջանտըկին, էնու ջանտակ
ինչըս թաղիս էնու բըոթերուց, տիւ զար մըչ էնու աչքերուն, օր
էնու հաղթես:

Կեսօրե ետ էլան գինա կոիվ: Դև քանի եզար, էն քար էտու
հանեմ, էն էլ քառսուն կըդրանոց գորզ կը զանի մըչ դևու
աչքերուն: Չուր հիրիկուն կռվան: Բարգրան Սև դևու քյինթ ու պե-
րան կոտըռտեց, աչքեր, ատըմներ արընեց, հաղթեց ըզՍև դև:

Մեկ էլ ընգերներուն կանչեց, ասաց. - Եկե՛ք, էսա ջանտակ
տարեք, թալեք մեկ տեղըմ:

Ընգերներն էկան, ջանտակ ամեկ ոտըմ պըսնեցին, տարան
թալեցին մեկ խորըմ:

Սըլվտակ դևն էլ ասաց. - Դէ՛, տանցե՛ք, յանք, մեր տուն
մըսաֆըր էղեք հեսօր:

Ընգերներ ասին. - Չէ՛, մե դաստո՛ւր տու, մենք յանք խըտ
մեր ճամփին:

Ասաց. - Չէ՛, տ'իյանք իմ տուն, ծե պատիվ տը պըսնեմ, ծե
ըըվեր տը տամ:

Ելան, էկան դևու տուն: Կերան, խմեցին: Չուր լուս քյընան:

Խըլիսուն Սըլվտակ դև ասաց. - Էսա թաղթի վըրեն ես ու Սև
դև կը կովենք էսա երկու տարի: Գի տիւր էկաք, հաղթիցիք,
մեկտ մնացեք, ծե տընեմ վոլի Վըր էսա թաղթին:

Թագավորի լաճ ասաց. - Բարգրան, քյե կը խասի էսա
քաղաք:

Բարգրան տըրին էտա քաղթի վերեն վոլի:

Բարգրան թագավորի լաճուն ասաց. - Շախզադա՛, օր տիւ
կերթաք, ա՛ռ իմ ջըղարի կուրին, տա՛ր քիւ խետ, օր նեղի ընգան,
հըլին ճի՛ւր երա, տի՛ր քիւ գյըլսու վիրկ, կը գամ, քյե կը խասին:

Են տեղեն էլան, գացին: Գացին, ընգան Կարմիր դևու երկիր,
օր էտոր խող ու քար կարմիր, սարեր կարմիր, ծառեր, ծըրեր
կարմիր:

Տեսան շենըկըմ գի մըչ տաշտին, շենըկն էլ կարմիր: Գա-
ցին, շենըկի տիւր նստան:

Տեսան, օր մեկ ախչիկ փանջարից գյուլիս եպեր տիւմ՝ ջըլեր
կարմիր:

Ասաց. - Տիւ վլ՛ն եքյ, նստեր եքյ էտա տեղ:

Ասաց. - Մենք ճամխորթ ենքյ, տիւր պա՛ց, գանքյ տուն:

Ասաց. - Էլե՛քյ, գացե՛քյ, քանի Կարմիր դև չէկե, ծե ուտա,
տիւր հի՞ւր տը գա՞քյ տուն:

Ասաց. - Տիւ տիւր պա՛ց, մենքյ գա՞նքյ, թը գա, մե ուտա:

Ասաց. - Ես տիւր չըմ պանձր:

Թագավորի տըղեն ասաց. - Զանգահոն, ապա էտա կոտըշ-
ներ հի՞ւր ես առե խըն քյե, էլի՛, պա՛ց տիւր:

Զանգահոռ էլավ, մեկ կոտըշով եզար, տըրան կըտորներ
թըռան տան վիրին տեղ, մըտան հիմե:

Ախչիկն էլ ի՞նչ էնա, էլավ, էտոնց խաց եպեր, էտոր խացն էլ
կարմիր, կըտելներն էլ կարմիր: Խաց կերան, պըռծան:

Մնաց չուր հիրիկուն: Դև էկավ: Տեսան, օր կրակ մոտեն կը
թալա: Էկավ վըր տըրան:

Թագավորի տըղեն ասավ. - Զանգահոն, էլի՛ր, քիւ վերեն ա,
ախըր տիւր տիւր կոտըրեր ես:

Զանգահոռ ու Կարմիր դև զարկին իրարու: Զանգահոռ օր
ուր կոտոշ կը զարկա, դևու փոր կը ճղա, կէլի էնոր թևեր, արուն
կէլնի, արընի մեչ կը կուրուսին, կրակ Կարմիր դևուց կը թալա,
պից ու ծուխ տվեր վերենքներ:

Թագավորի տըղեն ասաց փայլսնին. - Էլի՛, քիւ վաթսուն
կըդրանոց գորզն ա՛ն, էլի՛, խասի՛ մեր ընգերոչ օգյնություն:

Թագավորի փայլսան ուր վաթսուն կըդրանոց գորզն առավ,
էլավ, օր կը զանի, օղեր կը տեպի իրար, կրակ մոտեն կը թալա:

Զէտա դև հաղթեցին:

Թագավորի տըղեն էլ ասաց. - Զանգահոն, քյե տը տըմեմ
էտա տան վերեն:

Զանգահոռն էլ ասաց. - Ենա զանգակ ա՛ն, տար խետ, եփ օր նեղի ընգիս, զանգակ շարժես, ես ծեն կառիմ, կը գամ, քյե կը խասիմ:

Են էլ զանգակ կառի ու թագավորի լաճու խետ կելին, կերթան:

Կերթան, կընգին ասլանի երկիր: Կը տեսնին, օր թաղըմ շինուկ ա, շենլըկ մ' էլ գի հինե:

Կերթան, կը տեսին, օր ախչիկըմ գի շենլըկ վեր:

Կը խառցընեն. - Տիւ ի՞նչ ախչիկ ես ըստա:

Կասա. - Ես հիսան եմ, իմ խեր թիւջար էր, ասլան ծիկ առե, եկեր ըստա:

- Տիւ ո՞ր մեկ երկրեն ես:

Կասա. - Ես Բարժեռու երկրեն եմ:

Կը խառցընեն՝ փարիքյներու թագավորի ախչիկ չեկե՞ր ծեր երկիր, հիսան էր էկած տարած:

Կասա. - Մեր վաճառականի տըղեն խերու մեկ ախչիկ եպեր:

- Ապա տիւ էնոր անուն, պան չիմացա՞ր՝ ի՞նչ էր:

Ասավ. - Են ախչըկա անուն Յիրի-Սիրի էր:

Թագավորի տըղեն էլ կիմանա, թե էնու նշանածն էր:

Են տեղ ախչըկեց կը խառցընա, թե. - Գյիտե՞ս՝ ո՞ր երկիրն ա, ո՞ր գյեղն ա:

Կասա. - Խա՛, մեր երկիրն ա, ես գյիտեմ:

Մեն էլ կը տեսնան՝ ասլան ըն կողմեն կը գա:

Թագավորի փայլւան կելնի հառեճ, բաշլեն կոիվ:

Իրեք օր, իրեք գյիշեր հիրարու կը զանեն:

Ասլան կը հաղթովի: Կառնեն զախչիկ ու կերթան: Շատ կերթան, թիչ կերթան, շատ թիչ Աստված գյիտա, կիյան ախչըկու երկիր:

Ախչըկե երկիր մարթեր կը տեսնան, օր երկու փարի են, դև են, ջանավար են, ի՞նչ են, առած ախչիկըմ, կը գան:

Զիւյաբ կը տան քաղըյին, ասքար կըլնի հառեճ: Կը բաշլեն բոփերով զանել, չարա չեղիր:

Փարիքյներու թագավորի տըղեն զանգակ կը տա հիրար: Զանգակ տալու պես Զագահոռ կը գա, խասի: Կովի մինչև հիրիկ-վան: Յիրիկուն ետա կութին հիլին ճուր կը լրցա, կը տընա գյըլխու վիրև:

Բարգրան կը գա, կը խասի: Խըլիսուն կելին, կըսկըսին
կոիվ:

Ասքյըրի կումանտար կը տեսի, օր մեկ կոտըշներով, տըլոտ
գագանըմ գի ընտեղ կոիվ ա: Մեկ էլ կը տեսնա, օր մեկ հաջլացիք
մարդըմ ճաղցի քարըմ շալկե:

Ասքյըրին կասա. - Մենք չընք կանա խընտ ինոնց կովել:
Մը՞յ կովի, թը գան, խե ի՞նչ կասեն:

Ենոնքն էլ կերթան մըշ քաղյին:

Կումանտար կերթա հառծըվներ, կասա կումանտարին. -
Տիւ ընչի՞ մեր խետ կոիվ կենեք:

Կասա. - Մենք չընք գյիտի՝ տիւ ի՞նչ մարթ եք, ետոր խա-
մար մենք էլ կը կովինք:

Կասա. - Ել կոիվ կուզե՞ք, թե՞ չըք ուզեր:

Կասա. - Չէ, էլ կոիվ չընք ուզեր:

Կումանտար կասա. - Տիւ ընչի՞եք ըստեղ էկեր:

Կասա. - Իմ նշանած ախչիկ հիսաներ առած են, էկած:

Կումանտար կասա. - Մեր քաղաք չի, հիւրիւշ քաղաք մ' ա:

Թագավորի լաճ ախչըկեն կը խառցընա, թե՛ ո՞ր մեկ քա-
ղաքն ա:

Ախչիկ կասա. - Եսա քաղաք չի, հիւրիւշ քաղաք ա:

Կումանտարն էլ զետոնք կը տանի, պատիվ կը պըռնա
էտոնց, կերակուլ կը տա մինչև խըլիսուն: Խըլիսուն կումանտար
կերթա, էտոնց նկարներ կը տա քաշել:

Թելկըռաֆ կը տա թագավորին. «Եսա շենքով չորս մարթ ա
էկած»:

Ենոնքն էլ խըլիսուն կելնին, ուրենց ճամբախ կը պըռնեն,
կերթան:

Թագավորն էլ թելկըռաֆին պատասխան կը գյըրա, թե՛
էտա մարթերուն ամսական տուր, ճամխա գա իմ մոտ:

Կումանտար կէլի, էրկու-իրեք ծիավոր կը ճամխա հե-
տևներ, ամա մարթ չըկա: Կը տառնան, կը գան:

Կումանտար թելկըռաֆ կը տա Պաղշու քաղյի փաշին.
«Փաշա՛, էսպես չորս մարթ կը գան, մեկ ծակ ճաղցի քարըմ կա-
պեր քամակ, մեկ էլ իրեք կոտըշեն՝ զանգըկներ գի կոտըշներուց:
Երկուսն էլ փարի՞ են, չըմ գյիտե ի՞նչ են»:

Վոլին էլ կենի, նիրադար կը տընա քաղըի կըշտըներ,
խենք Ե՞փ տը գան:

Նիրադարներ կը տեսին, օր էտ ասած մարթեր էկան:

Վոլին էլ խաբար կենա կումանտարին. - Քու ասած մարթեր
էկան իմ քաղաք:

Կումանտարն էլ խաբար կենա, կասա. - Թագավորն ուզեր ա
էտա մարթեր, ասա տես՝ չը՞ն երթա մը թագավոր:

Վոլին էտա մարթեր կը տանի ուր կոնախ՝ քյեֆ, ուրա-
խութեն, կերակուլ:

Կը խառցընա մոտքերուց. - Մըսաֆըրնե՛ր, ի՞նչ կենեք,
հո՞ւստ կը գաք:

Կասեն. - Իմ նշանած փախցուցած, պերած, ըստա ենք
սալախ առեր:

Վոլին կասա. - Շա՛տ լավ, պերած են գոյ ըստեղ թիւջրի
տուն, թիւջրի տըղեն պերեր ա:

Էտա թագավորի տըղեն ընգերներ կը թոնի վոլու մոտ,
կենի, կերթա ուր նշանածի տուն:

Կերթա տուն, մարթ չեղեր տուն, մենակ ուր նշանած տուն
վեր կեղի:

Կը նստին իրարու խետ զրից:

Կասա. - Դա՛յ, անաստվա՛ծ, տու ընչի՞ էկար:

Կասա. - Ես ի՞նչ էնեմ, իրեք արաք էկան, ծի առան, էկան:

Ասաց. - Եսա իրեք տարի ա, օր ես քու հիտև ընգեր եմ,
երկու տարի խընչ քհւ խոր կոհիվ եմ երեր, տարի մ' էլ ճամբախ կը
գամ: Տը գա՞ս, քյե առիմ, երանք, չըգա՞ս:

Կասա. - Զի լաճ ու ախչիկ մ' էլ էլած հիսնից, հիսանի խոտ
ընգեր վըր ծի, թալեմ գա՞մ, իմ ծըժեր՝ իմ ջիգարն ա, չըմ կարնա
թալեմ, պերեմ խե ծիկ՝ ամոթ ա: Ես գամ ընտեղ, հըմեն իմ հիրես
տը թըջեն, տ'ասեն՝ տու հիսան առար:

- Ապա ի՞նչ էնենք, ի՞նչ չենենք:

Կասա. - Օր տու ծի լըսես, էնոր քհւրըմ կա, մարթ էնու
հիրես չըտեսեր, խընծ ծի դըհա շատ խորոտ ա, տու տանես,
գյիշերն էլ ծրաք չենես, էնուր լուս կը տա պատեր: Տիւ օր ծի
լսես, գենի առնիս, էյաս, էլ ծենե եօգուտ չի գար:

Տըղեն կը համոզվի:

Կասա. - Դի՞ր ա, ծի շանց տուր:

Կասա. - Վոլա՛, գի էնա մազալ, տհւո էլ փակուկ ա, պանիս
գի խընչ էնու ախապոր:

- Ես փարի եմ, ես կանամ տհւո պանամ, գէնի թամաշա
էնեմ, են ծի չըխի էլ:

Թագավորի տղղեն կերթա, կը տեսնա զախչիկ: Ախչիկ նըս-
տեր, էնու մատնըկներու խետ կը խաղա, լուս տղվե վերեն, շա-
մալ մոտեն կերթա:

Տղղեն մեկ սրտով չէ, տաս սըրտով վերեն կը զարկվի:

Տղղեն կը տառնա, կերթա ուր նշանածի մոտ:

Կասա. - Իմ սիրտ կպավ, ամա ի՞նչ էնենքյ, գհօռ՞վ տը տա-
նենքյ, թե՞ խաթրով:

Ախչիկ կասա. - Ընչի՞ գհօռվ տանես, խաթրով էրա: Տհւ էլի՛,
գյընա վոլու դիվան, քիւ ընգերքյերու մոտ, ես հիրիկուն իմ իրկան
տ'ասեմ:

Տղղեն էլավ, գյընաց:

Դիրիկուն էրիկ էկավ, ասավ. - Կնիկ, աջըբնելի պա մ'էկած
վոլու մոտ:

- Ի՞նչ են, ի՞նչ պան են:

Ասավ. - Երկու փարի են, չոգյիտեմ ի՞նչ են, մեկել ճռչ քարըմ
կապեր քամակ, ընոր ջանտակ խընչ ուղտըմ կա: Մեկելն էլ
տղլոտ, գհմշիւ տեսակ ա, իրեքյ կոտըշեն, զանգակներ կոտըշից
կախ:

Կնիկ ասաց. - Ես գյիտեմ՝ վոն են:

Ասաց. - Վո՞ն են, օր տիւ գյիտես:

Ասաց. - Մեկ իմ նշանած փարու թագավորու լածն ա, մեկն էլ
էնու փայլւան ա: Մեկել էրկուս էլ ճամշխըներն ա կընդած խետ:

Ասաց. - Տհւ ի՞նչ գյիտես, տիւ տունը վեր, ընոնց ի՞նչ տե-
սար, ի՞նչ գյիտցար՝ վո՞վ են:

Ասաց. - Մենք փարի ենքյ, ես կիմանամ:

Ասաց. - Օր տիւ կիմանաս՝ ինոնքյ իո՞ւր ա էկած:

Ասաց. - Էնոնքյ էկած ան, ծի տը փախցուցեն, ի՞նչ տ'էնես:
Կանա՞ս խետքեր պա մ'ընես, ծեր թագավոր կանա՞ խետքեր
կովի:

- Զէ՛, ո՞ր կը գըխշընա էնոնց խետ կոիվ էնա, ո՞ր տեսեր ա,
հախու կտրեր ա:

- Եփօր ծի տանի, տարտ չըս էնե՞:

- Խա՛, ես մառախից կը մեղիմ:
- Ապա ի՞նչ տ' էնես խընտ ծի:
- Կասա. - Արիմ քե, էրթամ հէւրիւշ քաղաք:
- Կասա. - Դիր տանես, կը գա:
- Ապա ի՞նչ էնենք, տու ճամբախըմ կընդիր:
- Կասա. - ճամբախ էն ա, թե քիւ քէւրոչ խավնավ, տու տը տա՞ս:

Կասա. - Թե տու էնպես պա մ' էնես, խարիր քէւր կուրբան կէնեմ էնոր:

Ասաց. - Օր էնպես ա, գյընա՛, ա՛ո, արի՛ մեր տուն մըսաֆըր:

- Էրթամ ի՞նչ ասեմ:

- Գյընա՛ ասա՛ փարիքյներու թագավորի՛ լաճ, հրամեցեր, քիւ մարթերով էրթանք մեր տուն:

Տըղեն էլ կէրթա, կը տիսնա, օր նստած ան վոլու դիվան վեր:

Կէրթա, պարև կը տա, կասա. - Յրամեցե՞ք, էրթանք մեր տուն մըսաֆըր:

Ենոնքյն էլ կէլին, կը գան:

Կարի, կը գա տուն, կը նստին: Խաց կուտեն, կը սպասեն չում կեսավուր:

Փայլւան կասա թէւջրի լաճուն. - Մենք էկեր ենք, քիւ քէւր տ'ուզենք մըր թագավորու լաճուն, տը տա՞ս, թե՞ չէ:

Տըղեն էլ կասա. - Ծե պարի, ես խարիր քէւր կուրբան կէնեմ ծեր թագավորի պերան: Իմ քէւր ու տըղեն հիրարու խետ տեսնըվեն, թե իրարու խավնան, ես կը տամ:

Փայլւան կասա. - Թե ախչիկ խավնավ, ուզեց, մենք կը տանենք, թե չըխավնավ, մընք ընքյ տաներ:

Տըղեն կասա. - Իմ քէւր կէրթա մեր տան պակի հախպիւր ճըրիւ, թագավորի լաճ թ' էրթա, տեսնի, խավնին իրարու:

Ախչիկ կէլին, կէրթա ճըրիւ, տըղեն էլ կէրթա հիտև, մեկ մեկու կը տեսին, գիրար կը սիրին, վեր մեկմըկու աղըլներ կէրթա:

Կը մնա կուշանան, թագավորի փայլւան ու փարի ախչիկ կէլին, կէրթան:

Տեսան՝ էրկուս ինգած իրարու վըզով, աղըլներ գացեն, ընգած էն տեղ: Ճիւր կը ցանեն հիրեսն վեր, կը խանեն վեր:

Փարու ախչիկ կասա փայլւնին. - Քհւ թագավորի լած ի՞նչ
եր ըրած իմ տալիչ գյոլին:

Փայլւն կասա. - Ապա քհւ տալվ ի՞նչ եր ըրած իմ թա-
գավորի լածու գյոլին:

Ընտեղ կը լնեն, իրարու մատնիկ կը փոխեն, ախչիկ կը գա,
ուր մազալ կը նստի, տըղեն կը գա մոտ ուր ընգերքյեր:

Թհրւրի տըղեն կը խասկընա, օր իրարու խավնած, ուր քիւր
կը տա փարու լածուն:

Վոլին էլ կը կանչա, կը տանի:

Կասա. - Շախզանդա՛, մեր թագավոր ծե ուզեր ա:

Տըղեն կասա. - Զիօռ՝ վ մե կը տանեքյ, թե՞ խաթրով:

Կասա. - Չէ՛, խաթրով:

Կասա. - Օր խաթրով ա, մենքյ երթանքյ ծեր թագավորի
քաղաքյ վեր կընցինքյ, կերանքյ:

Ետա ախչիկն էլ, օր ասլանից առած են, տըվին վոլուն,
ասին. - Շամխա՛, թ'երթա էնու խոր մոտ:

Վոլին զախչիկ կը ճամխա ուր խոր մոտ:

Վոլին էլ կէլի, էտոնց փայթոն կը տա, ծի կը տա, կը ճամխա
մըտ թագավոր:

Կերան թագավորի քաղաքյ: Տեսնան, օր վոլու ճամխած
մարթեր էկան:

Թագավոր կը ճամխա հառճաներ, կը պերա էնոր դիվան: Կը
տեսին, օր էրկու փարի են, մեկ էլ հիսան ախչիկ: Մեկ էլ ծէշ քա-
րըմ շալկեր, մեկ էլ իրեքյ կոտըշեն, տըլոտ, մըլոտ, գիմշիւ տեսակ
պան ա:

Կը նստին թագավորի դիվան: Թագավոր էնոնց պատիվ կը
պըռնա:

Թագավոր էտոնց կը խառցընա. - Տիւ ո՞ր տեղացի եքյ, ի՞նչ
մարթ եքյ:

Կասեն. - Մեկ փարու թագավորի լածն ա, մեկ էլ էնու
փայլւնան ա:

- Ապա էնա էրկու հաջլաջիրներն ի՞նչ են:

Կասա. - Են էրկուսն էլ ճամբախն եմ կընդեր, պերեր:

Կասա. - Ենա քար ընչի՞ ես կապե քհւ քանակ:

Կասա. - Են քար իմ մարտալն ա, կոհիվ օր էնեմ, հազըր կը
պըռնեմ ծեռու:

- Քհւ անուն ի՞նչ ա:
- Իմ անուն՝ Բարգըրան:
- Վոլա՛, քհւ անուն հարմար ա, քհւ պեռ ծանտըր ա:
- Ապա Ենա կոտըշներովի անուն ի՞նչ ա:
- Իմ անուն էլ Զանգահոռ ա:
- Վոլա՛, քհւ անուն էլ հարմար ա՝ զանգըկներ կախած կոտըշըերուց: Ետա զանգըկներ ընչի՛ կախած ես:

Կասա. - Կախեր եմ, օր երթամ կոհիվ էնեմ, էնոր ծեն լսեն, օր չասեն տիւ գնդտիկ էկար կոհիվ:

Թանգավոր կասա. - Ապա Են ախչի՛կ, ի՞նչ ախչիկ ա ծեր խետ:

Կասա. - Են էլ թիւջրի մ'ախչիկ ա, առեր եմ, իկեր եմ ձիկ:

Կասա. - Տիւ փարի, ինչպե՞ս հիսան առար:

Կասա. - Էնոր ախպեր էկավ, իմ նշանած էպեր, ես էլ գենու քհւր առա, էկա:

Թանգավոր գէտոնքյ կը ճամխա, կերթան էնոնց էրկիր:

Բարգըրան ու Զանգահոռ կը ճամխա ուրենց տեղ: Ինքյ, ուր փայլսան ու նշանած ամեկ ծի՛ն կը խեծին, կերթան էնոնց խոր քաղաքյ:

Կերթան հառեճ, կը տեսնան, օր հիսան ախչիկըն առեր, պերեր խետ:

Զհւյաբ կը տան թանգավորին, թանգավոր էնոնց ակընջկըլա կը տա: Կը տանի, կը փօսակա: Վեց օր, վեց գյիշեր խարսնիս կէնա: Էնոնքյ կը խասին ուրենց մուրագին, տիւն էլ՝ քհւն:

